ՔԱՋ ՆԱԶԱՐԻ ԿԵՐՊԱՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԻՅԱՆ

Ժողովրդական հեքիաթները գեղարվեստորեն մշակելիս Հովհաննես Թումանյանն անցնում է ստեղծագործական բուռն և բարդ ճանապարհ, որը հարուստ է ծանրակշիռ հայտնագործություններով: Հեքիաթագիրը ժողովրդի մեջ խորագիտորեն փնտրում է բազմաշերտ ու խրթին հարցերի պատասխանները. «… նա (ժողովուրդը – Լ. Հ.) խոսում է հազար ձևերով ու արտահայտություններով. միայն հարկավոր է կարողանալ էդ գտնել, նկատել ու տեսնել»[1],– ասում էր բանաստեղծը՝ հավերժական հարցերի պատասխանները, հնախույզի համառությամբ, մակաբերելով «ամենաբարձր ստեղծագործություններից»[2]՝ հեքիաթներից:

Թումանյանը մշակման ենթակա է համարել ժողովրդական այնպիսի սկզբնաղբյուրներ, որտեղ, ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Գուլակյանը, արտահայտվել են «ժողովրդական խելքն ու աշխարհայացքը», որոնք էլ հանդիսացել են «ժողովրդի սոցիալական ու բարոյական» ըմբռնումների արտահայտման միջոցներ և համընկել «գրողի սեփական ըմբռնումներին»[3]:

Ամենատես երգիծանքը չափազանցությունների որոշակի չափաբաժնով. ահա թումանյանական իրապատում հեքիաթների առանձնահատուկ բանաձևը, որի միջոցով հեղինակը կերտում է իրական կենցաղային միջավայր ու բնավորություններ, միջանձնային և հասարակական հարաբերություններ, բարձրացնում լուծում պահանջող խնդիրներ[4]: Եթե Թումանյանը ժողովրդական հեքիաթի կատարելատիպ էր համարում «Հազարան Բլբուլը», որի հետ կարող էր համեմատվել միայն հունական առասպելաբանության «հարստություն»-ը[5], ապա ժողովրդական հեքիաթների սեփական մշակումների գագաթին տեսնում էր «Քաջ Նազար» հեքիաթը: «Իմ կարծիքով,– խոստովանել է հեքիաթագիրը,– ես միայն մի հեքիաթ եմ մշակել կարգին (գուցե չնչին պակասություններ ունենա, ով գիտի), և դա

---

[1] Ն. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 32:

[2] Տե՛ս Ն. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Հուշեր և գրույցներ, Երևան, 1969, էջ 233:

[3] Տե՛ս Ս. Ա. Գ ո ւ լ ա կ յ ա ն. Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթի գաղափարական իմաստը.– «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի, 1965, -9, էջ 113:

[4] Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 321:

[5] Տե՛ս Ն վ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Հուշեր և գրույցներ, Երևան, 2009, էջ 206:

«Քաջ Նազարն» է[6], *որը պատրաստ էր աներկյուղ հանձնել «ամբողջ գրական աշխարհի քննությանը»*[7]*:*

Հեքիաթի ստեղծագործական աշխատանքը Թումանյանն իրականացրել է ձեռքի տակ ունենալով հետևյալ աղբյուրները՝ Գ. Սրվանձտյանի հայկական հեքիաթների ժողովածուն, Գ. Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» գիրքը, Ա. Ն. Աֆանասևի ռուսական ժողովրդական հեքիաթները, Գրիմ եղբայրների հեքիաթները, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа»- *ի մի քանի հրատարակությունները,* «Сборник сведений о Кавказских горцах»- *գիրքը՝ իր հեքիաթի համար որպես հիմք ընդունելով հայկական «Դժիկոն» հեքիաթը*[8]*:*

«Քաջ Նազարը» անարժան մարդու անսպասելի հաջողության պատմությունն է, որը, լայն տարածում գտնելով կովկասյան և այլ ժողովուրդների բանարվեստում, չի վրիպում հեքիաթագրի աչքից, այսպիսով՝ «քաջնազարականության» թեման ներմուծելով հայ գրականություն և առաջացնելով նազարականություն կամ նազարիզմ *թեմատիկ ուղղությունը*[9]*:*

Հեքիաթն «ամենատաղանդավորը և հասարակության դաստիարակության տեսակետից ամենաուսանելին» որակումն է ստանում[10]*, քանզի ողջախոհության հավերժական կոչ է, որը նպաստում է հասարակական անառողջ ցնցումների կործանարար հետևանքների մերկացմանը: Հատկապես կեղծ հեղինակությունների ետևից շարժվելու կործանաբեր վտանգի գիտակցումն է ստիպում Թումանյանին գտնել հասարակական առաջընթացն ապահովող հավերժական շարժիչը, ճշգրիտ բանաձևը, ինչն հաջողվում է վերջինիս «խորը, անծայր, հարուստ ու շքեղ» «հավերժական սիմվոլների»*[11] *տիրույթում:*

«Քաջ Նազարը» համամարդկային ընդհանրացումների, ինչպես նաև ազգային բնավորության, աշխարհընկալման ընդերքի պեղման յուրօրինակ և հաջողված աշխատանք է, որտեղ հեղինակը ցուցաբերում է հոգեբանի խորագիտություն՝ ներկայացնելով անձի և հասարակության ներսում հաճախ ենթագիտակցական մակարդակում կատարվող փոփոխություններն ու տեղաշարժերը: Ժանրի թելադրանքով՝ Թումանյանը չի զբաղվում հոգեվերլուծությամբ, սակայն թույլ է տալիս ընթերցողին հասկանալ հերոսի վարքի ներքին դրդապատճառներն ու պատկերացում կազմել ամբոխային հոգեբանության մասին: «Քաջ Նազարի» հոգեբանական խորքը հանճարեղաբար նկատում է դեռևս Ն. Աղբալյանը՝ որակելով նյութը «խորապես հոգեբանական և իմաստասիրական» ստեղծագործություն, որից

---

[6] *Տե՛ս Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, 1994, էջ 787:*

[7] *Տե՛ս նույն տեղում, էջ 734, Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1945, էջ 471-472:*

[8] *Տե՛ս Ս. Ա. Գ ո ւ լ ա կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 114:*

[9] *Տե՛ս Մ. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ոչ միայն հացիվ, Երևան, 1987, էջ 286:*

[10] *Տե՛ս Ալ. Մ ա ր տ ո ւ ն ի. Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը (սոցիոլոգիական ակնարկ), Թիֆլիս, 1923, էջ 32 և Ա. Վ ա ր դ ա ն յ ա ն. Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Երևան, 1986, էջ 145:*

[11] *Տե՛ս Ն. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Հուշեր և զրույցներ, էջ 233, Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, էջ 472:*

«պայծառ լույս է ընկնում… մարդկային պատմության և առօրյա կյանքի վրա…»[12]:

Նազարի պատմությունն ընդունված է համարել անարժան վախկոտի անսպասելի հաջողության պատմություն, որտեղ հերոսը ցուցաբերում է ակնհայտ պասիվություն, իսկ որոշումներ կայացնողը ստրկամիտ հասարկությունն է[13] ՝ հերոսին շրջապատող միջավայրն իր գրոտեսկային վերագրումներով: Մեր կարծիքով, սակայն, իր ճակատագրում Նազարի խաղացած դերի և ազդեցության խնդիրը լուծված չի կարելի համարել:

Թումանյանի հերոսը ճարպիկ խաբեբա չէ. փոքրիկ դիպվածը ստիպում է սեփական վախերից, անճարությունից տառապող մարդուն փոխել պատկերացումները իր իսկ անձի վերաբերյալ, ազնվորեն հավատալով իր նորահայտ «ընդունակություններին», զբաղվել ինքնախաբեությամբ, որը հետագայում վերածվելու էր մեծ խաբեության:

Հեքիաթում հակադրվում են իրավիճակը սթափ գնահատողներն ու անոմալ ընկալողականություն ունեցողները, որոնք ամեն ինչ շրջում են գլխիվայր: Ընտանիքում և հայրենի գյուղում ճանաչում են, գիտեն Նազարի էությունը: Իսկ «նոր աշխարհում» նրան խորաթափանցորեն «տեսնում է» միայն իրատես ձին, որին չի շփոթեցնում կատակով գրված, բայց անհերքելի ճշմարտություն համարվող երկտողը: Հեքիաթի առաջին իսկ կոնֆլիկտային միջադեպից առավել ցայտուն է ընդգծվում հեղինակի և հերոսին շրջապատող միջավայրի համակարծությունը Նազարի ով լինելու վերաբերյալ:

Հերոսին հատուկ է պարծենկոտությունը, որով վերջինս փորձում է սքողել սեփական թերարժեքությունն ու ներկայանալ որպես «իսկական տղամարդ» ՝ մեկը, որ կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել ու իրականացնել դրանք. «– Ա՛յ կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր է՛… սիրտս ասում է վեր կաց գնա Հնդստանից եկող շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու…»[14]:

Իրենց գյուղում վախկոտի համբավ վաստակած Նազարի շուրթերից նման ցանկությունների արտաբերումը լավագույն դեպքում տարօրինակ պետք է հնչեր: Կնոջը հակադարձելով՝ Նազարը կշտամբանքի այնպիսի բառեր է նետում, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ վերջինս սեփական անշնորհիքության և նույնիսկ ալարկոտության համար մեղադրում է կնոջը (այստեղ խոսում է Նազարի «ֆանտաստիկ եսը» ՝ «ինքնագիտակցության բաղադրիչներից» մեկը, որը հատուկ է պատանեկան տարիքին և իր մեջ ֆանտաստիկ պատկերացումներ է պարունակում»)[15]: Վերջինս բարձրաձայնում է «իսկական տղամարդ» դառնալու իր պատկերացումները, որոնց իրականացմանը, իր կարծիքով, խոչընդոտում էր «անզգամ կինը». «–

---

[12] *Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 23. X. 1912:*

[13] *Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, էջ 333, Ս. Ա. Գ ու լ ա կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 114-115, Ա. Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. Երեք հեքիաթ.– Ոսկե Դիվան, Հեքիաթագիտական հանդես, պր. 1, դեկտեմբեր, 2009, էջ 124 – 129, Մ. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 285–307, Էդ. Մ. Ջ ր բ ա շ յ ա ն. Գրականության պատմա-գործառական ուսումնասիրության սկզբունքները.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, -3, էջ 16-21:*

[14] *Տե՛ս Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, էջ 235:*

[15] *Տե՛ս Ա. Ա. Ն ա լ չ ա ջ յ ա ն. Էթնիկական հոգեբանություն, Երևան, 2001, էջ 50:*

Անզգա՛մ կնիկ, ինչու՞ չես թող անում՝ ես գնամ քարվան կտրեմ, բերեմ տունը լցնեմ: Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջը խոսես»[16]: Ամուսնու ճոռոմախոսությունը կինն ընդունում է որպես մարտահրավեր՝ դիմելով կոնկրետ քայլերի: Նազարի առջև փակվում են տան դռները՝ դռներ, որոնց ետևում հայտնվելով վերջինս թեպետ ճարահատ, սակայն պետք է ինքնուրույն որոշումներ կայացներ, ինքնուրույն գործեր ու ինքնահաստատվեր: Վախկոտ-ալարկոտը, կարծես թե, առաջին անգամ սկսում է մտածել. «…խռոված, պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա, տուն տանի, ու միտք է անում*»[17] (ընդգծումը մերն է – Լ. Հ.):*

Թումանյանը վարպետորեն է ներկայացնում կենտրոնական կերպարի հոգեբանական փոփոխությունները. զրկվելով կնոջ հովանավորչությունից և տուն վերադառնալու հնարավորությունից՝ Նազարը վարկաբեկում է անհասանելի դարձած նպատակը՝ բարձր պահելով ինքնահարգանքն ու ինքնագնահատականը:

Մի զարկով մի քանի ճանճ սպանելը ստիպում է վերջինիս «կարևոր և լուրջ» ինքնավերագրումներ կատարել՝ տեսնելով իր մեջ հատկանիշներ, որոնք չուներ և երբեք էլ չէր ունենալու, սակայն համառորեն ցանկանում էր տեսնել (դրական ինքնագնահատական ունենալու պահանջ). ինքն՝ «իսկական տղամարդու կատարելատիպ», որին վայել չէր գտնվել «անպիտան կնկա» կողքին. «–Վա՛հ,– ասում է,– ես էսպես տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացել … Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնկա կողքին վեր ընկել…»[18]:

Հաջողության հասնելու ճանապարհին Նազարը կայացնում և իրագործում է երկու կարևոր որոշում՝ պատվիրում է արձանագրել իր, այսպես կոչված, սխրանքն ու, փափագելով հանրությանը նորովի ներկայանալու հույսն, ուղղակի փոխում միջավայրը. «– Տե՛ր տեր, բա չես ասիլ՝ էսպես-էսպես բան:

Պատմում է իր քաջագործությունը ու հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնկանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ չմնա, ամենքն էլ կարդան, իմանան»[19]:

Եթե ժողովրդական հեքիաթի Դժիկոն, ավարական հեքիաթի Նազնայը տանից հեռանալուց հետո են ճանճերը սպանում, ապա Թումանյանի Նազարը ճանճերը սպանելուց հետո է վճռում վերջնականապես լքել տունն ու հարազատ միջավարը, որն ուշագրավ մանրամասն է. Թումանյանի հերոսն ինքն իրեն վերագնահատելուց և արժևորելուց հետո է միայն լքում իր տունը[20]: Ինքնավեհացման «սրբազան ծեսը» կատարված էր. Նազարն անելիք չուներ մի միջավայրում, որտեղ չեն նկատում իր «արժանիքները», և որոշակի ակտիվություն է ցուցաբերում: Ներքին փոփոխությունների և հանգամանքների բերումով՝ Նազարը տեղափոխվում է առավել

---

[16] *Տե՛ս Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, էջ 235:*
[17] *Տե՛ս նույն տեղում, էջ 236:*
[18] *Նույն տեղում:*
[19] *Տե՛ս նույն տեղում:*
[20] *Տե՛ս Ս. Ա. Գ ո ւ լ ա կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 115:*

նպաստավոր միջավայր՝ առանձնահատուկ հոգեպաթոլոգիա ունեցող խումբ[21], բնավորության պարադոքսալ գծերով օժտված հասարակություն, որն ամեն ինչ տեսնում և մեկնաբանում է յուրովի, պլակատային զգայական պատկերը նույնացնելով Նազարի հետ, կարողանում է հեշտությամբ ընդունել վերջինիս կարծեցյալ քաջությունը, հավատալ դրան՝ կերպափոխված վախկոտությունը գունավորելով նորանոր առաքինություններով:

Գյուղական քահանան, կատարելով վախկոտ Նազարի ծիծաղելի և անտրամաբանական թվացող խնդրանքը, ստեղծում է երկտող, որը հոգեբանական ներազդեցության գործիքի է վերածվում՝ դնելով Նազարի առասպելական պատմության հիմնաքարը. ինքնավեհացման և անհատի իդեալականացման մի տխրահռչակ պատմություն, որի նախատիպերը կարելի է մակածել համաշխարհային պատմության տարբեր փուլերից՝ գտնելով «հնության առասպելական հերոսի՝ Պրոմեթեոսին հավասար բարձրության» հասցված անհատների[22]: Լաթի վրա դրոշմված «բնութագրականով»՝ աննշան արարքը հերոսականացվում, ստերեոտիպացվում է՝ դառնալով «տարատեսակ հաղթանակների» սկզբնապատճառ: Ստերեոտիպացման արդյունքում հաջողության են հասնում նաև Թումանյանի «Չախչախ թագավորն» ու «Անբան Հուռին», որոնք, ի տարբերություն Նազարի, ազատված են ինքնուրույն որոշումներ կայացնելու պարտականությունից: Ամեն ինչ այլ է Նազարի պարագայում. սեփական «սխրանքները» հանրածանոթ դարձնելու ձգտումը, պաշտպանություն ու հովանավորչություն կորցրած մարդու ինքնապաշտպանական փորձ կարելի է որակել: Եթե Նազարի հոգեկան պահանջմունքն էր ձեռք բերել ճանաչում, ապա միջավայրի հոգեբանական պահանջմունքն էր «իդեալական առաջնորդ» ունենալը. արդյունքում վախկոտը դառնում է «քաջ ու անհաղթ», քանի որ ինքնախաբեությամբ զբաղվող Նազարը գտնում է ինքնախաբեության ախտով տառապող ամբոխին: Թեպետ տարերայնորեն, այսինքն՝ չունենալով որոշակի ծրագիր, այնուամենայնիվ, Նազարը հասնում է իր նպատակին՝ այսպես կոչված քաջագործությունը հրամցնելով ամենքին՝ վայելելով արագահաս փառքի քացր պտուղները, որոնք սիրահոժար նվեր էր ստանում և իր շինծու կերպարը զարդարում նոր զարդաքանդակներով. «Նազարը որ ուշքի է գալի, լեզուն բացվում է. «Ափսո՛ս, ասում է,– ընչի՞ սպանեցիք զոռով մի ձի էի շինել, նստել … էնքան պետք է քշեի ո՛ր …»[23]:

Իր հանճարին հատուկ սրատեսությամբ՝ հեքիաթագիրը ներկայացնում է անհատի առասպելականացման ուշագրավ պատմություն, խուսափելով էթնոցենտրիզմից (ազգակենտրոնություն), ինչն առավել տեսանելի է դարձնում հեքիաթի վերջաբանը՝ հաստատելով ստեղծագործության համամարդկային և պաշտպանական՝ հոգեբուժական, նշանակությունը:

«Քաջ Նազարը» սոսկ գրոտեսկային դեպքերի շարադրանք չէ. հեքիաթագիրը խոսում է առասպելակերպ գաղափարի և պատկերացումների մասին,

---

[21] В. О д а й н и к. Психология политики. Ювента, 1996, с. 30.

[22] *Տե՛ս Մ. Գ ո ր կ ի. Գրական - հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 293:*

[23] *Տե՛ս Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 5, էջ 242:*

որոնք գործում են հասարակական գիտակցության որոշակի ոլորտներում՝ վերածվելով իրականության պատրանքային արտացոլանքի: Հասարակական գիտակցության վրա ներազդելու և մարդկանց կառավարելու մղումը տարբեր նպատակների համար ենթադրել և ենթադրում է տարաձև ու տարատեսակ միջոցներ, որոնցից հաճախ ամենաարդյունավետը շարադրանքի որոշակի ոճ, իրականության որոշակի հատիկներ պարունակող առասպելակերպ կառույցների արարումն ու կիրառումն է, որոնց ստեղծմանն ու տարածմանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում հասարակությունը կամ հասարակության մի հատված՝ դրանով կերտելով իդեալական առաջնորդի կերպար: Իդեալական առաջնորդի կերպարակերտումը կատարվում է նաև սոցիալական խմբի հոգեբանական պահանջմունքների հիմքով ու հաճախ սոսկ պատկերացումների և վերագրումների միջոցով: Թումանյանի հեքիաթի նախաշերտերի հիմքում ընկած է վերոհիշյալ երևույթը:

ТУМАНЯНОВСКАЯ ТРАКТОВКА ОБРАЗА КАДЖ НАЗАРА

ЛУСИНЕ АЙРИЯН

Р е з ю м е

Литературная обработка народных сказок стала для Туманяна полем нововидений и открытий. Таким стал для него и «Кадж Назар». Это история удачливого, но недостойного человека, которую Туманян вводит в армянскую литературу, создавая целое тематическое направление назаризма. Туманяновского центрального героя принято считать пассивным героем, который не играет существенную роль в своих удачах, однако тщательный анализ показывает, что процесс назаровского самоутверждения и возвышения происходит по активному вмешательству главного героя. Для достижения известности Назар применяет два важнейших действия: во-первых, просит местного священника констатировать так называемый героический подвиг, а во-вторых, это своеобразное орудие воздействия и вовлечения перемещает в другую общность, который с легкостью и охотой верит в героизм Назара и обогащает миф, создавшийся вокруг его имени. Это сказка имеет оборонительную значимость, которую утверждает сказочная концовка.

TOUMANYAN’S RENDERING OF KAJ NAZAR'S IMAGE

LUSINE HAYRIYAN

S u m m a r y

Developing national tales, H. Toumanyan has passed a furious creative way which is rich with discoveries. Toumanyan’s “Kaj Nazar” is considered to be an original discovery as Toumanyan

brings the hero of his tale from folklore to Armenian literature making the “Nazarism” one of the eternal themes of Armenian literature.Toumanyan’s central character is considered to be a passive hero, who does not play a significant role in his successes, but careful analysis shows that the process of Nazar’s self-affirmation and elevation occurs on the active intervention of the protagonist. To achieve fame, Nazar applies two main steps: firstly he asks the local priest to enlist the so-called heroic deed, and secondly Nazar moves the weapon of retraction and efficiency to another community which easily believes in Nazar’s heroism and enriches the myth created around his name. This story has a defensive meaning, which claims a fantastic ending.